ՍՈՎՈՐԱԿԱՆԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄԱՍՏԸ

Տոհմիկ արվեստագետ ընտանիքներ եզակի չեն արվեստի պատմության մեջ: Ընտանիքի արվեստագետ զավակների հաջորդականությունը նպաստավոր, բարերար հանգամանքների կողքին ունի և վտանգավորը, անցանկալին: Դա մանկուց ամենուր ու ժամ տեսածին նմանվելու, ծնողների հարթած ճանապարհով ընթանալու վտանգն է: Արամ Իսաբեկյանին այդ վտանգը սպառնում էր կրկնակի. թե՛ հայրը՝ Էդուարդ Իսաբեկյանը, թե՛ մայրը՝ Արփենիկ Նալբանդյանը, նկարիչ են: Բայց նրանց որդին, բարեբախտաբար, ստեղծագործողի առողջ բնազդով ըմբռնել էր, որ կրկնելը, թեկուզ մեծերին, անարժեք, անիմաստ բան է, որ հարկավոր է ստեղծել սեփականը, տակավին չասված: Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի 1976-ին ավարտելուց հետո Արամ Իսաբեկյանն արդեն ասելիք ուներ և ասելիքը արվեստ բերելու խոհեմություն ու պատրաստակամություն: Նաև ուներ մեր օրերի նկարիչներից քաջություն պահանջող համոզում, որ արվեստի դարեդար մշակված, հաստատված ու ու մերօրյա գեղարվեստական բարձրագույն հաճույք պատճառած կարգ ու կանոնը մերժելի չեն, քանի որ կյանքից են աճեցվել ու կյանքի պես հավերժական են:

Եվ նա իր նախապատվությունը տվեց դասական ժառանգության կարգ ու կանոնին, իհարկե՝ մերօրյա բովանդակությամբ ու մերօրյա գեղարվեստական մտածողությամբ: Ու հրապարակ եկան նրա վրձնած մեր ժամանակակիցների դիմապատկերները, որտեղ իրականն ու իրականակերպ տեսիլները շաղախվելով, դիտողին առիթ են տալիս մտորելու, հեղինակի ակնարկածը մտովի շարունակելու:

Սակայն ինձ, խոստովանում եմ, այս ակնարկը գրելու մղել են նկարչի նատյուրմորտները, որոնցում, ըստ իս, առավել ինքնատիպ ու լիարժեք է դրսևորվել նկարչի ձիրքը: Պատահական չէ, որ Շվեյցարիայում, Լեհաստանում, Հնդկաստանում, Սիրիայում և այլուր կազմակերպված հայ արվեստի ցուցահանդեսներում Արամ Իսաբեկյանի նատյուրմորտները արժանացել են արվեստասերների ուշադրությանը, դրվատական խոսքերին:

Արդի կերպարվեստում նատյուրմորտը սիրված ու զանգվածորեն կիրառվող ժանր է, մանավանդ ծաղիկներ կամ մրգեր պատկերող նատյուրմորտը, որը իր լավագույն նմուշներում գույների հետ միասին կարծես ներառել է դրանց կենդանի գոյությունը, հմայիչ համն ու հոտը և, այդպիսով, թվում է, հերքում է ժանրի «մեռյալ բնություն» անվանումը:

Արամ Իսաբեկյանի միտքն ու վրձինը զբաղեցնող նատյուրմորտը այն մարդն է, որտեղ նկարիչը հնարավորություն է ստանում

Նատյուրմորտ ներկապնակով



ինչ-որ բովանդակալից բան ասելու դիտողին, մեզ շրջապատող ամենատիպական առարկաների միջոցով դիտողին մղելու նորովի տեսնելու ու գնահատելու իր շրջապատն ու կենցաղը, դրանք նորովի իմաստավորել:

«Ինքնաեռով նատյուրմորտը» (1982), «Լապտերով նատյուրմորտը» (1988) և նման այլ կրտավներ կարծես մեզ կոչ են անում սովորականի մեջ տեսնելու գեղեցիկը և, որ ավելի կարևոր է, մեզ կապելու մեր անցյալի, մեր ազգային ավանդույթների հետ:

Հատուկ խումբ են կազմում նույն առարկայական աշխարհում ծավալվող, նույն այդ առարկաներով հարուցված մտորումները վերարտադրող նատյուրմորտները: Դրանցից է, օրինակ, «Իգդիրի ժամացույցը» (1983): Պատկերված է արդի սովորական ժամացույց, բայց խորքում՝ Իգդիրից բերված հնամենի գրպանի ժամացույցն է: Եվ դա դիտողի ընկալման մեջ այն զուգադրությունն է ստեղծում, թե իգդիրցու սրտում (Արամը իգդիրցիների ժառանգ է) ապրում ու տոկում է հայրենիի հուշը, թող որ արտաքուստ աննկատ, բայց և անկորնչելի:

«Նամակ Ամերիկայից» կտավում նույն ժամացույցն է, հայրենաբնակ հային շրջապատող գրքերն ու իրերը: Նա նամակ է ստացել ամերիկաբնակ հայրենակցից: Պատկերում ամեն ինչ հարազատորեն ներդաշնակված է, բայց այդ ամենին գույնով ու ձևով, իր ամբողջ էությամբ հակադրված է նամակագրի ապրած վայրի խորհրդանիշ դրոշակը: Դրա տակ դժվար չէ կարդալ հեղինակի միտքը. նամակագիրը հայ է, Հայաստանի հետ կապված, բայց ապրած վայրը Հայաստան չէ, և ոչ էլ նրան իր մեջ առած միջավայրը՝ հայկական: Երկու դեպքում էլ պարզ ու սակավախոս միջոցներով հեղինակը կարողացել է վարել իմաստալից խոսակցություն: Նկարիչը գույնը լավ է զգում: Բայց գույնը նրան հարկավոր է ոչ թե գունախաղեր ստեղծելու, այլ նյութական աշխարհի ճշմարտությունն արտահայտելու նպատակով: Նրա գույները մեզ հաղորդակից են դարձնում սովորականի գեղեցկությանը:

Վերջապես նշենք, որ նատյուրմորտի այդ տարատեսակը սփյուռքահայ արվեստում կիրառվում է արդեն վաղուց: Փուշմանի, Ծղդյանի ու այլոց ստեղծագործություններում բազմիցս հանդիպել է ակնհայտ հաջողությունների, մինչդեռ խորհրդահայ արվեստում կարևոր նորույթ է և ևս մի կամուրջ է գցում հայրենի ու սփյուռքահայ արվեստների միջև:

Այդ շնորհակալ առաքելությանը լուծընկեց է Արամ Իսաբեկյանը:

Նատյուրմորտ գինու շշով

Ինքնանկար